

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

2. Գ. ՀԱԿՈՐՑԱՆ

Գեղարվեստական տեքստի (ԳՏ) լեզվաոճաբանության բնագավառում առանձնացվում է երեք¹ հիմնական ուղղություն՝ 1. հեղինակային անհատական ոճի յուրահատկությունների բացահայտում, երբ ԳՏ-ի ոճաբանական վերլուծությունը կապվում է տվյալ տեքստի կառուցվածքային՝ կոմպոզիցիոն կազմակերպման, այդ տեքստում տրամաբանական-իմաստաբանական (ինտելեկտուալ) և զգացական (էմոցիոնալ) ինֆորմացիաների հաղորդման լեզվական միջոցների նպատակահարմար օգտագործման հետ. վերջինս համակարգային բնույթ ունենալով՝ ինքնին հանգում է բովանդակության և ձևի նպատակահարմար համապատասխանության: Ուսումնասիրությունների այս ոլորտում կատարվում է ԳՏ-ի բառային և քերականական նյութի ոճաբանական նկարագրություն, որը հնարավոր է դարձնում տեքստի առանձին մասերի ճանաչումից անցնել ամբողջի ճանաչմանը, իսկ սա իր հերթին վստահելի ճանապարհ է բացում բանասիրական-արվեստաբանական հայեցակետով կատարվող ոճաբանական լրնդհանրացնող հետազոտության համար: 2. Ոճի օբյեկտիվ քննություն՝ ոճավիճակագրություն, երբ ԳՏ-ի վիճակագրական բնութագրումը, որպես օժանդակ միջոց, օբյեկտիվ չափանիշների գործադրումով նպաստում է հեղինակային ոճի առանձնահատկությունների բացահայտմանը՝ լրացնելով ուսումնասիրության բանասիրական հայեցակետը և հիմնավորելով սրա գերազանցապես սուբյեկտիվ արդյունքները. ընդ որում, ոճաբանության մեջ քանակական՝ վիճակագրական վերլուծությունը, ինչպես մի առիթով նկատում է Ա. Զիքոբավան, չի բացառում լեզվական փաստերի իմաստային կողմի որակական մեկնաբանության անհրաժեշտությունը², նվ վերջապես՝ 3. ոճի ազդեցության արժեքավորումը ընկալողի համար. այս ուղղությունը սերտորեն կապվում է հուզա-արտահայտչական առումով որոշակիորեն ձևավորված ԳՏ-ի հաղորդակցական գործառնության քննության հետ: լեզվական ոճը բառային ամեն մի հաղորդման կարևորագույն բնութագրումներից մեկն է և ուղղակիորեն կախված է հաղորդման ակտի գործառնություններից ու բովանդակությունից, հաղորդման իրադրությունից, խոսողի նպատակադրումից, խոսքի մասնակիցների փոխհարաբերությունից, հոգեբանական և սոցիալական գանազան կարգի գործոններից և այլն: Այս դեպքում գործ

¹ Е. Моерк, Объективное статистическое описание стиля («Общественные науки за рубежом», 1974, № 1, стр. 210).

² Арн. Чикобава, О философских вопросах языкознания («Известия АН СССР», 1974, № 4, стр. 314); Б. Н. Головин, Язык и стилистика, М., 1971, стр. 13 и сл.

ունենք, այսպես կոչված, գործառական ոճերի և սրանք ուսումնասիրող գործառական ոճաբանության հետ:

Նշված երեք ուղղությունն էլ չափազանց կարևոր են ԳՏ-ի լեզվաոճաբանական քննության համար և իրար նկատմամբ գտնվում են լրացական հարաբերության մեջ:

Սույն հոդվածում շոշափվող հարցերը վերաբերում են ոճաբանության ստալին ուրուխին: Մեր մի քանի ըմբռնումների մասին ընդհանուր պատկերացում տալու նպատակով, համառոտակի նշենք ելակետային որոշ կանխադրություններ, որոնց վրա հենվում ենք:

1. Մենք հակված ենք բանասիրության մեջ արտահայտված այն կարծիքին³, թե լեզվական ոճը ընդհանրապես և մասնավորապես խոսքարվեստում առաջին հերթին, բայց ոչ միայն, կապվում է բառագործածության հետ: Բառագործածությունը հենց ինքը ոն է բանաձևի ընդունումը լայն առումով թույլատրելի է դարձնում ԳՏ-ում ամեն մի բառագործածությունը կարող է ոնական արժեք ստանալ միտքը: Նշենք, սակայն, որ այս կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ կան բավական հիմնավոր տարակարծություններ:

2. Բառագործածությունը իբրև գեղարվեստական ստեղծագործության սկզբունքներից մեկը, բայց ոչ միակը, միաժամանակ նաև բառանյութի նպատակադիր-միտումնավոր ընտրություն է: Այս սկզբունքի միջոցով լեզվաոճաբանությունը, վերջին հաշվով, հանգում է համանիշաբանությանը:

3. Ընտրության սկզբունքն ունի միանգամայն գիտակցական բնույթ: Նշենք սրանից, մենք նույնպես ոճին վերագրում ենք գնահատողական, վերաբերմունքային արժեք, որով էլ հենց այն դառնում է սոցիալապես իմաստավորված և պատճառաբանված երևույթ:

4. ԳՏ-ն պարտադրաբար բաղկացած է իմաստակիր երեք շերտից՝ ա) բուն բովանդակային-գաղափարաբանական, բ) ոճական-գեղագիտական-զգացական, որ հենց գեղարվեստական ձևն է, և գ) ենթատեքստային: Մաքուր ձևով սրանք անկախ դրսևորում չունեն, քանի որ գեղարվեստական պատկերը գոյություն ունի միաժամանակ և՛ որպես բովանդակային, և՛ որպես ձևական կատեգորիա⁴: Իսկ առանց ենթատեքստային շերտի ԳՏ-ն պարզապես դադարում է գեղարվեստական լինելուց, որովհետև բառի իմաստային արժեքը ԳՏ-ում, բացի անմիջականորեն տրվածից, էականորեն իմաստավորվում և լրացվում է նաև ենթատեքստային կապերի միջոցով⁵:

5. Գեղարվեստական խոսքային պատկերավորության համակարգը կարելի է հանգեցնել որոշ կարգի հակադրությունների, տարբերակիչ հատկանիշների, և նկարագրությունը տանել ԳՏ-ում ոճաբանորեն նշանակիր և ոչ-նշանակիր տարրերի, այսպես ասած, վարքագծի պարզաբանման ուղղությամբ:

³ Л. Боровой. Язык писателя, М., 1966, стр. 13.

⁴ Н. К. Геё, Искусство слова, М., 1967, стр. 19 и сл.: А. П. Чудаков, Поэтика Чехова, М., 1971 («Введение»).

⁵ Т. И. Сильман, Подтекст как лингвистическое явление («Филологические науки», 1969, № 1), նույնի՝ Подтекст—это глубина текста («Вопросы литературы», 1969, № 1); В. А. Кухаренко, Типы и средства выражения импликации в английской художественной речи («Филологические науки», 1974, № 1).

խոսքարվեստի մեջ պատկերավորության համակարգը բաղկացած է ոճաբանական զանազան շերտերից: Դրանց գիտական ճանաչումը հնարավորություն կտա գոնե ընդհանուր գծերով հասկանալու, թե ինչպես է կատարվում անցումը սովորական՝ ոչ-գեղարվեստական տեքստից դեպի անսովոր՝ գեղարվեստականը, իրականության առարկաների ու երևույթների հատկանիշներին ճշգրիտ բնութագրումը ն՛րբ և որտե՛ղ է վերածվում գեղարվեստական-դեղագիտական ճշմարտացի բնութագրման և այլն: ԳՏ-ում կատարվում է լեզվանյութի նոր բովանդակավորում և բովանդակության համապատասխան նյութականացում. գեղարվեստական պատկերի ձևավորման մեջ սա միաժամանակյա պրոցես է, որի գործնական ցուցադրումը, ըստ երևույթին, բավական բարդ է: Հայտնի է, որ ամեն մի ազգային դրական լեզու ունի դեղագիտական պոտենցիա՝ պատկերային որոշակի արժեք, որը ներունակությամբ տրված է բառային և շարահյուսական մակարդակներում: Հայտնի է նաև այն, որ լեզվական համակարգի ամեն մի գրավոր կամ բանավոր խոսքային իրացում թեև ունի ստեղծագործական, այսինքն՝ արտահայտչական, պատկերավորության տարր, բայց դեռ գեղարվեստական խոսք չէ: Բայց քիչ է հայտնի կամ գրեթե բոլորովին չի ուսումնասիրված, թե ինչպե՛ս է ոչ-գեղարվեստական խոսքը փոխակերպվում, վերածվում գեղարվեստական խոսքի:

Առաջադրվող հարցի պատասխանը, մեր կարծիքով, կարող է տալ ոճաբանության մի նոր բնագավառ, որը հարմար ենք գտնում, հայտնի համաբանությամբ, անվանել սերոզ ռաբրանդություն: Ինչպես տեսանք, այն ունի իր խնդիրներն ու նպատակները: Սերոզ ռաբրանության համար առայժմ միայն վարկածի արժեքով առաջարկում ենք մի պարզ մեթոդ, որը սլայմանականորեն անվանում ենք ռեական ետադարձ բացասման կամ պարզապես բացասման մեթոդ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս պատկերավորման աստիճանական շերտավորում ունեցող ԳՏ-ում, ռաբրանորեն նշանակիր երկանդամ կամ բազմանդամ արված կառույցների որոշ բաղադրիչների բացասման ճանապարհով, հասնելու ռաբրանորեն ոչ-նշանակիր՝ ելակետային շեղոթ տեքստի ստացմանը (իհարկե, սա հարաբերականորեն է միայն շեղոթ):

Բացասման մեթոդի գործադրումը մեզ հանգեցրել է մի գաղափարի, որը փորձում ենք գնահատել որպես տեխնիկական աստիճանական հաջեցման կատեգորիա: Ցանկացած ծավալի ոչ-գեղարվեստական տեքստ աստիճանաբար համապատասխան ոճական հաջեցման հասնելուց հետո վերածվում է գեղարվեստականի: Անցման աստիճանները, մեր կարծիքով, դիտարկելի են և ԳՏ-ի սերման տեսակետից պարունակում են արժեքավոր ինֆորմացիա:

Իմացաբանորեն թերևս անհնար է այդ հաջեցման աստիճանների հաջորդականության սահմանումը, կամ գուցե ընդհանրապես գոյություն չունի այդպիսի հաջորդականություն: Համենայն դեպս, մի բան պարզ է, որ գեղարվեստական պատկերավորության համակարգում գնահատողական, վերաբերմունքային ակտիվությամբ առանձնանում են որոշիչային և ձևիպարագայական, լայն առումով՝ մակդիրային բնութագրումները, որոնք էլ մենք հակված ենք դնելու տեքստի ոճական հաջեցման առաջին կամ ստորին աստիճաններում: Հասկանալի է, որ և՛ այս, և՛ պատկերավորման-արտահայտչական մյուս միջոցների իրացումը ԳՏ-ում հնարավոր է դառնում մեծ մասամբ բառերի փոխաբերական գործածությամբ, քանի որ առանց սրա խոսքարվես-

տի մեջ ընդհանրապես, անմտածելի են բառային-գեղարվեստական պատկերներն ու պատկերավորությունը:

Որոշիչը և ձևի պարագան վերաբերմունքային շարահյուսական կարգեր են և, այս իմաստով, ունեն ոճական հատկանշականություն⁶ նույնիսկ ոչ-մակդիրային իրենց կիրառություններով (իհարկե ոչ միշտ): Որոշիչը առարկայի՝ իրականության մի հատվածի, ձևի պարագան գործողության՝ իրականության մի հատվածի շարժման բնութագրումներ են, որոնք ունեն գնահատողական, վերաբերմունքային արժեք և մասնակցում են գեղարվեստական պատկերի ստեղծմանը: Դրանք ոճաբանորեն նշանակիր խոսքային միավորներ են և ԳՏ-ում կատարում են ոճական գործառություն: Որոշիչներին և ձևի ոլորագաններին հատուկ է նաև առարկաների և գործողությունների բովանդակային ու վերաբերական ճշգրտումը, կոնկրետացումը, որը նույնպես կապվում է գեղարվեստական պատկերի իմաստային լիարժեքության հետ: Այսպիսով, մենք ընդունում ենք, որ որոշիչն ու ձևի պարագան իրենց նույնիսկ ոչ-մակդիրային կիրառություններով ԳՏ-ի ոճական համակարգի բաղադրիչներ են, որոնք այդ համակարգի կազմակերպման մեջ երբեմն ստանում են ամենավճճական նշանակություն, առավել ևս այն դեպքերում, երբ դրանց միանում է նաև մակդիրային երանգը:

Այժմ Դ. Դեմիրճյանի պատմվածքներից բերենք օրինակներ ցույց տալու համար, թե որոշիչներն ու ձևի պարագաները ինչպե՞ս են ոճաբանորեն հագեցնում տեքստը և գեղարվեստական պատկերի ձևավորման մեջ ի՞նչ դեր են խաղում: Այսպես՝ «— Գուքամ, գուքամ,— լսվում էր հեռվից տերտերի մկկող ձայնը,— մաշտոցս առնեմ՝ գուքամ»⁷, «Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՛ն: Միշտ հաստ շալը վաթսուն-յոթանասուն տարեկան կուղի վրայով վզին փաթաթած, երկար իրանը բերընքսիվար ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա»⁸, «(Հայրոն) կնստեր, մեջքը ուղիղ պատին կպցրած և անշարժ կնայել դեպի ամբիոնը: Կդիտեր խանդավառված: Նրա երկարավուն, արծվաքիթ և բերանաբաց դեմքին մի մշտական ժպիտ կար»⁹:

Բերված տեքստերում բնութագրումները չափազանց դիպուկ են, իմաստերանգային մանրամասների մեջ անթերի մշակված: Հեղինակը ճգրիտ և ոճաբանորեն տարողունակ բառագործածություններով հասել է հերոսների գեղարվեստական պլաստիկ կերպարայնության: Այդ հերոսներին մենք մոտավի տեսնում ենք պատկերային-տեսողական և նույնիսկ լսողական զուգորդություններով: Դեմիրճյանական բնութագրումներից ելնելով, կարելի է խոսել, օրինակ, Հաճի աղայի, խանդավառ ու մշտապես ժպտացող Հայրոյի կամ մկկան ձայնով տերտերի մարդկային նկարագրի մասին, պատկերացնել նրանց այլ իրադրություններում և այլն: Այստեղ դնահատողական-գեղագի-

⁶ А. И. Ефимов, Стилистика русского языка, М., 1969, стр. 150.

⁷ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 40:

⁸ Նույն տեղում, էջ 14:

⁹ Նույն տեղում, հ. 2, 1956, էջ 52:

տական դորժառություն կատարում են որոշիչներն ու ձևի պարագաները, որոնց վերացումը բացահայտորեն ոչ միայն թուլացնում է ԳՏ-ի ներգործության ուժը, այլև ընդհանրապես զրկում այն պատկերավորությունից, դրանով իսկ ինչ-որ չափով բացառելով տեքստի գեղարվեստականության հանգամանքը: Բավական է համեմատել՝ «(Հայրոն) կնստեր և... կնայեր դեպի ամբիոնը: Կդիտեր... նրա... դեմքին... ժպիտ կարա: Պատկերավորման աղքատությունը, ավելի ճիշտ, լրիվ բացակայությունը ակնհայտ է: Այս «չոր» և սխեմայի արժեք ունեցող ոճաբանորեն ոչ-նշանակիր՝ չեզոք տեքստը պատկերավորման տարրերով՝ տվյալ դեպքում որոշիչներով ու ձևի պարագաներով հագնելուց հետո միայն կարող է վերածվել ԳՏ-ի՝ ստանալով իր նախկին կամ գեղարվեստորեն դրան համարժեք մեկ այլ տեսք: Շարահյուսական-ոճաբանական այդ կարգերը Դ. Դեմիրճյանի պատմվածքների լեզվում ունեն ոճաբանորեն կազմակերպող-առանցքային դեր:

Դրանք բավականաչափ նկատելի են նաև բանաստեղծական լեզվում (թեև գեղարվեստական խոսքի այս ոլորտում առավել բնութագրականը մակդիրային կիրառություններն են): Մեր բացատրությունների համար, ի լրացումն արձակի, բերենք մի երկու նմուշ չափածոյից՝ «Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց, նաիրուհին տխուրաշյա և համեստ...»¹⁰, «Վերջալույսին ոսկեշող, Դաշտերում ծաղկած, Շրջում էի մենավոր, Հոգիս անդորրած»¹¹:

Ամփոփենք: Սերող ոճաբանությանը, բացասման մեթոդին, ԳՏ-ի ոճական աստիճանական հագեցման գաղափարին և այս կապակցությամբ որոշիչների և ձևի պարագաների ոճաբանական արժեքավորմանը վերաբերող մեր որոշ նկատառումները հեռու են բացարձակ պնդումներ լինելուց: Սակայն այդ հարցադրումները ԳՏ-ի համակողմանի ուսումնասիրության համար կարող են օգտակար լինել և նպատակադիր քննության դեպքում՝ իմացաբանորեն արդյունավետ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИЗУЧЕНИЯ ХУДОЖЕСТВЕННОГО ТЕКСТА

Г. Г. АКОПЯН

Резюме

Одной из центральных проблем лингвистического анализа языка художественной литературы является вопрос соотношения стилистически нейтрального (нехудожественный текст) и стилистически маркированного (художественный текст) текстов. В специальной литературе до сих пор не затрагивались вопросы трансформации нехудожественного текста в художественный. В процессе трансформации нехудожественного текста в художественный особое место отводится оценочным синтаксическим категориям определения и обстоятельства образа действия, выступающим в художественном тексте в качестве стилистически маркированных речевых единиц.

¹⁰ Վ. Տ եր յ ա ն, Երկեր, Երևան, 1956, էջ 293:

¹¹ Ա Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկեր, հ. 1, Երևան, 1958, էջ 344: